ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՅՑԵՑ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲՈՒՆԻԱԹՅԱՆԸ

Կիրակի, մայիսի 4-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Նորին Սրբություն Շենուդա Գ Պատրիարքի հանդիսապետությամբ մատուցվեց հերթական Ուխտի Պատարագը: Մայր Տաճարի օծման 1700-ամյակի տոնակատարությունների ծիրից ներս այս անգամ ուխտավորաբար Սուրբ Էջմիածին էր եկել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Ուկրաինայի հայոց թեմի ուխտապահ ժողովուրդը: Օրվա պատարագիչն էր թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը:

Պատարագի ընթացքին երկու քույր Եկեղեցիների Հովվապետերն իրենց օրհնությունն ու պատգամը փոխանցեցին հավատացյալներին: «Մեր հայցը այսօր երկինք է բարձրանում Աշխարհամատուռից ծավալվող լույսով, որ նորոգեց աշխարհը և առաքելական ժամանակներից բնակվում է նաև Հայաստանում ու Եգիպտոսում: Եվ թեպետ հեռավոր անցյալի չափանիշներով մեր երկրները աշխարհագրորեն միմյանցից բավականին հեռու են, սակայն այն հավատակերտ ժամանակներից ի Քրիստոս հաղորդությամբ մեր ժողովուրդներին միացրել է մեկ, ընդհանրական, առաքելական և Սուրբ Եկեղեցին: ...Նույնն է և մեր առաքելությունը, որ եղբայրական սիրով զորացած պիտի շարունակենք, որպեսզի հավատը, հույսը և սերը լուսավորեն կյանքի իմաստը և դեպի Տերը ուղղորդեն նրա ընթացքները: ... Ձերդ Սրբություն, վստահ ենք, որ Ձեր այցը Ս. Էջմիածին եղբայրության նոր շունչ պիտի հաղորդի մեր Եկեղեցիների հարաբերություններին, որ իբրև թանկ հարստություն ժառանգել ենք մեր հայրերից»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

«Ձեր երկիրն առաջինն էր աշխարհում, որ ընդունեց քրիստոնեությունը որպես պետական կրոն: Եվ ձեր Եկեղեցին կոչված է կրելու Տիրոջ խաչը: Մենք մի ենք մեր հավատքի և դավանանքի մեջ, և մեր երկու ժողովուրդներն անցել են բազում փորձությունների ու դժվարությունների միջով դարեր շարունակ: ...Մենք աղոթում ենք ձեր ժողովրդի և Եկեղեցու համար և հայցում ձեր աղոթքը մեզ համար, որպեսզի առավել ամրապնդվենք ամենքս մեր առաքելության և ի Քրիստոս մեր ծառայության մեջ»,- նշեց Ս. Մարկոսի Աթոռի գահակալը:

Սրբազան արարողությանը ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, ՀՀ ԳԱԱ նախագահ Ֆադեյ Սարգսյանը, ՀՀ-ում Եգիպտոսի, Սիրիայի, Իրաքի արտակարգ և լիազոր դեսպանները: